1. ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

Р. Я. АГАБАБЯН

Профессор, доктор архитектуры, заслуженный деятель науки и техники Груз. ССР

«29» սեպտեմբերի 1963 թ.

Հարգելի Տիրան!

Խորին շնորհակալությամբ ստացա Ձեր աշխատությունը՝ «Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ»[1] խորագրությամբ: Գիրքը միայն էսօր հասավ ինձ և ես հնարավորություն ունեցա միայն թերթելու այն: Արտաքին տպավորությունն լավն է, նյութը նոր է և հետաքրքիր, ուրախությամբ կկարդամ ու, եթե հարկ լինի, կհայտնեմ նաև կարծիքս:

Ձեր՝ Ռ. Աղաբաբյան

2. ՌՈՒԲԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ

Շատ հարգելի Ռուբեն Յակովլևիչ

Խնդրում եմ ներող լինեք, որ իմ շնորհակալական խոսքը բերել, միացնում եմ Նոր տարվա շնորհավորանքներին:

[1] Տիրան Մարության, *Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ*, Երևան, 1963 (այստեղ և հետագայում բոլոր ծանոթագրությունները կազմողինն են):

Իմ ամենամեծ ցանկությունը, որ ի խորոց սրտի ուղղում եմ Ձեզ այն է, որ այս ու հաջորդ տարիներին առողջ լինեք, առողջ լինեք և առողջ լինեք: Մնացածը՝ փառք բարձրյալին, Ձեզ ոչինչ չի պակասում, այն դուք վաստակել եք տարիների ջանքով:

Ձեր ընտանիքին և Ձեզ անձամբ երջանիկ օրերի հայրենաբուխ մաղթանք:

Նվիրվածությամբ՝ Տիրան Մարության

1. 1. 1968 թ.

ք. Երևան

3. ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

Սիրելի բարեկամ՝ Տիրան!

Ձեր վերջին նամակը ջերմ մաղթանքներով իմ հասցեին ստացա, մեծ շնորհակալությամբ: Բանն այն է, որ դեռ հիմա էլ տանն եմ ու երևի մինչև 15 փետրվար կլինեմ հիվանդի դերում: Փառք աստծո վերքերս փակվեցին, ուրեմն վիրահատությունը հաջող անցավ, այժմ մի փոքր ուռուցք է մնացել ականջի տակ, որը պետք է հանվի հետզհետե, երևի 2-3 ամսվա ընթացքում: Բժիշկս ասում է, որ. «շոգերն ընկնեն՝ այն էլ ձյունի նման կհալվի, տեսնենք»: Հովհ. Թումանյանը գրում էր. «մարդիկ տարբերվում են անասուններից մի բանով միայն, որ նրանք հույսի զգացում ունեն, ապա խլել մարդուց «հույսը» նա իսկույն անասուն կդառնա»:

«Հայրենիքի ձայն»-ի փետրվարի 5-ի համարում կարդացի, որ լույս է տեսել Ի. Էլլարյանի գիրքը՝ «Աղստևի հովտի պատմական հուշարձանները» խորագրությամբ[2], եթե կարելի է մի օրինակ ուղարկեք ինձ, իմ հաշվին, գինն իսկույն կտեղափոխեմ փոստով: Որի համար շատ երախտապարտ կլինեմ:

[2] Ի. Բ. Էլլարյան, *Աղստևի հովտի բնությունը և պատմական հուշարձանները*, Երևան, «Հայաստան» հրատ., 1968:

Նորից շնորհակալություն, լավ եղեք, առողջ և քաջ:

Ձեր՝ Ռուբեն Աղաբաբյան

7. 2. [19]68

Թբիլիսի

4. ՌՈՒԲԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ

Մեծարգո Ռուբեն Յակովլևիչ

Կես տարի գործերս մոտները պահելուց հետո, այս ամսի 5-ին ստանում եմ Մոսկվա մեկնելու առաջարկ իմ դիսերտացիայի քննարկմանը (10/10 [19]68 թ.) ներկա գտնվելու համար[3]:

Բանն այն է, որ ВАК[4]-ի էքսպերտը, որ ինչպես անվրեպ երևում է Ն. Տոկարսկին[5] է, գրել է, թե այս գիրքը չի կարող դիսերտացիա հանդիսանալ, քանի որ հարցը վիճաբանական է ու էքսպերտը ստիպված պետք է ուսումնասիրի նաև մյուս կողմի (Ս. Մնացականյանի[6]) հայացքները և նոր գա անաչառ եզրակացության: Նրա կարծիքով Զվարթնոցի բոլոր հարցերը պետք է լուծվեն նորերի դիս[երտացիաներով] նրա մասին: Ինքը ըստ էության ոչ մի հարց չի քննարկում և ոչ մի կարծիք չի տալիս, թե ի՞նչ արդյունքի է հասել դիսերտանտը: Ավելի լավ է մի քանի մեջբերում անեմ:

---

[3] 1967 թ. Տ. Մարությանն իր «*Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ*» (1963 թ.) գիրքը որպես թեկնածուական ատենախոսություն պաշտպանում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գիտական խորհրդում: Ըստ գործող կարգի, այն պետք է հաստատվեր ԽՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի՝ ԲՈՀ-ի (ВАК) կողմից:

[4] Высшая аттестационная комиссия СССР – ԽՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողով՝ ԲՈՀ:

[5] Նիկոլայ Տոկարսկի (1892-1977) – հայկական ճարտարապետության պատմաբան, արվեստագիտության դոկտոր:

[6] Ստեփան Մնացականյան (1917-1994) – արվեստաբան, ճարտարապետության դոկտոր: Տ. Մարությանն իր «*Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ*» գրքում քննադատության է ենթարկում Զվարթնոցի Ս. Մնացականյանի կազմած վերակազմության նախագիծը:

Թեպետ ժամանակը քիչ է մնացել, բայց գուցե Դուք հնարավոր համարեք Ձեր այնտեղ աշխատող անձնական ծանոթներին, եթե կան այդպիսիք, ներշնչեք՝ ամենայն թյուրիմացություն թույլ չտալու համար (թերևս հեռախոսով):

Ես մեկնում եմ Մոսկվա հոկտեմբերի 9-ի առաջին սավառնակով:

Անխառն հավատարմությամբ, միշտ Ձեզ հարգող՝ Տիրան Մարության

[թերևս շարադրվել է 1968 թ. հոկտեմբերի 6-8]

5. ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

Р. Я. АГАБАБЯН

Профессор, доктор архитектуры, заслуженный деятель науки и техники Груз. ССР

«21» հոկտեմբերի 1968 թ.

Հարգելի Տիրան!

Լինելով Լենինգրադում՝ իբրև մի դոկտորական պաշտպանության ընդդիմախոս, ես հանդիպեցի ВАК-ի անդամներից մեկին (ազգանունն ասել չեմ կարող), որն իմ մոտիկ բարեկամներից է[7]: Նա խորհրդակցեց Ձեր դիսերտացիոն աշխատության հաստատման հարցերի վերաբերյալ՝ հարցնելով իմ կարծիքը: Երկար զրույցից հետո համաձայնվեց ինձ հետ (կային որոշ խորդուբորդություններ) և խոստացավ առաջիկա նիստին Ձեր հաստատման հարցը լուծել դրականորեն:

Շտապում եմ հաղորդելու այդ ուրախ լուրը և առաջինը շնորհավորելու Ձեզ:

[7] Ռ. Աղաբաբյանի հետագա նամակներից պարզ է դառնում, որ խոսքը խորհրդային ճարտարապետ և ճարտարապետության նշանավոր տեսաբան Բորիս Միխայլովի (1901-1969) մասին է:

2750-ամյակի տոներին[8] իբրև Պետշինի հյուր եղա Երևանում (17-20-ին), բայց ոչ մի կերպ չկարողացա Ձեզ հետ կապվել՝ էքսկուրսիաների և քեֆերի արանքում:

Ձեր՝ Ռուբեն Աղաբաբյան

6. ՌՈՒԲԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ

Թբիլիսի 15, Пекинская 2, кв. 34

Մեծարգո Ռուբեն Յակովլևիչ

Երեկ երեկոյան ստացա Ձեր 21 հոկտեմբերի թվակիր նամակը:

Եռակի շնորհակալ եմ Ձեզանից նախ նրա համար, որ իմ դիսերտացիայի դրական լուծման հավաստիքը ուրախություն է պատճառել Ձեզ, ապա նրա համար, որ առանց հապաղելու ուրախությամբ շնորհավորում եք ինձ իրոք առաջինը և վերջապես նրա համար, որ ներքին թելադրանքով պաշտպան եք կանգնել իմ գործին, գործ, որի նկատմամբ Ձեր վերաբերմունքը հայտնի է դարձել դեռևս անցյալ տարի Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գիտ[ական] խորհրդին ուղարկած Ձեր դրական կարծիքով, գրված սիրով և դարձյալ առաջինը:

ՎԱԿ-ի «ծածկված» ընդդիմախոսը[9] Ն. Տոկարսկին էր, այդ ինձ հայտնի դարձավ իրեն հատուկ ձևի արտահայտություններով: Մեր Վարազդատ Հարությունյանի[10] ասելով, Տոկարսկին համամիտ էր իմ աշխատության դրույթների հետ, բայց ես զգացել էի նրա ոչ ջերմ վերաբերմունքը, թեպետ և ոչ շատ հանդիպումներում մեր միջև որևէ սառը

[8] Խոսքը 1968 թ. հոկտեմբերին Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված տոնակատարությունների մասին է:
[9] ԽՍՀՄ ԲՈՀ-ը, որպես կանոն, յուրաքանչյուր ատենախոսության համար (հատկապես խնդրահարույց նկատվող) նշանակում էր ընդդիմախոս:
[10] Վարազդատ Հարությունյան (1909-2008) - հայ ճարտարապետության պատմաբան, պրոֆեսոր:

շիթ չի անցել: Ճիշտն ասած, նա իր ընդդիմախոսության մեջ գրեթե չէր թափանցել հարցի խորքը, անցել էր կողքից միայն, հարցականի տակ դնելով «պոլեմիկ» բնույթ կրող գրքի դիսերտացիա դարձնելու հնարավորությունը: ВАК-ի էքսպերտ հանձնաժողովում իմ ներկայացրած պատասխանները, որ ընթերցեցի 20 րոպեում (10 էջ էր) ներկաներից մեկի արտահայտությամբ «լիակատար էին»: Փոքր վեճ բացվեց մի կոնստրուկտորի հետ, որն անհամաձայն էր, որ կրաշաղախը ժամանակի ընթացքում գնալով ամրանում է, ասում էր՝ թուլանում է: Իմ բացատրություններով (հուշարձանների օրինակներով) նա չբավարարվեց, քանի որ իր կարծիքին չէր համընկնում:

Հետագայում իմացա, որ նախագահը Վորոբյովն էր, իսկ մյուսը, որ նախագահին հայտնեց, թե. «դիսերտանտի պատասխանները ռեցենզենտի գրած խնդիրներին լիակատար էին, և ես հարցեր չունեմ»՝ Միխայլովն էր:

Այս երկու անձնավորություններն էլ ինձ վրա թողեցին շատ լավ տպավորություն:

Իմ հարցով նրանց վեճը տևեց 45 րոպե, որից հետո նախագահողը թողեց, գնաց, իսկ մյուս երկու դիսերտանտների հարցը քննեցին առանց Վորոբյովի: Նրանց գործերն էլ իմի նման այդ օրը հետաձգվեց:

Ես առանձնապես շատ ուրախ եմ, որ Դուք քաջառողջ եք, որ հնարավորություն եք ունեցել Երևանի հոբելյանին՝ այդ համազգային խանդավառությանը, ներկա գտնվել, ինչպես և էքսկուրսիաներ գնալ ու քեֆերի նստել: Ամեն ինչ կատարյալ է եղել, փառք հանգամանքներին:

Խորին հարգանքով և անաղարտ սիրով՝ Տիրան Մարության

26. 10. 1968 թ.

Երևան

7. ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

29. X. 68

Թբիլիսի

Սիրելի բարեկամ՝ Տիրան!

Քանի որ Դուք արդեն կռահել եք, թե ո՞վ է եղել Ձեր քննախոսն, ապա ես նույնպես կբացեմ գաղտնիքը, իրոք՝ Ն. Մ. Տոկարսկին է եղել: Ինչ վերաբերում է ինձ հետ զրուցող մասնագետին, որի ներկայացմամբ Ձեզ հաստատելու են առաջիկա նիստին, ապա դա պրոֆ[եսոր] Բորիս Պետրովիչ Միխայլովն է, նրա հետ, ինչպես գրել էի, հանդիպեցի Լենինյան գրադարանում:

Մի խոսքով, ամեն ինչ այժմ անցյալ է, ցանկանում եմ ապագայում նույնպես նորանոր հաջողություններ:

Ստացա Ձեր հոդվածը՝ ««Գիրք թղթոցն» ու Մցխեթայի խաչը»[11], ուրախությամբ կկարդամ, հետաքրքիր ուսումնասիրություն պետք է լինի անկասկած:

Երևանում եղած օրերն անջնջելի տպավորություն գործեցին ինձ վրա: Ես բազմաթիվ տոների եմ մասնակցել ու հոբելյանների ներկա եղել, այսպիսի *համաժողովրդական* տոն ես առաջին անգամ տեսա, ավելի շուտ *զգացի* իմ ամբողջ էությամբ:

Երևանն արդեն կարող է հեշտությամբ մրցել Միության շատ քաղաքների հետ՝ անվախ կերպով, որ հաղթանակը իր մոտ կլինի:

Ջերմ ողջույններ՝ Ռուբեն Աղաբաբյան

8. ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

[11] Տ. Մարության, «*«Գիրք թղթոցն» ու Մցխեթայի խաչը»*. – Գիտություն և տեխնիկա, 1968, թիվ 5, էջ 44-52:

Հարգելի Տիրան!

Ձեր նամակը ստացա, իսկույն (թեպետ շտապում եմ դասախոսության) պատասխանում եմ՝

1. ВАК-ին դիմելու կարիք չկա, այդ գործն արդեն վճռված պետք է համարել, պետք է մի քիչ սպասել, ձևականությունները միշտ երկար ժամանակ են խլում: Ինչպես ես կռահեցի Ձեր գործը «խառնողներ» էլ են եղել, ոչ միայն Լենինգրադից, այլ և բուն Հայաստանից: Մի քիչ էլ սպասեցեք, եթե անհրաժեշտ լինի ես մասնավոր կարգով կդիմեմ Բ. Պ. Մ.-ին[12] և կիմանամ:

2. Ձեր հոդվածը «Գիտություն և տեխնիկայում» կարդացի, լավ պատճառաբանված հոդված է, պետք է *անպայման թարգմանել և տպել ռուսերեն,* որպեսզի այլ հանրապետություններում նույնպես կարդան: Անպայման! Հենց թեկուզ «Литературная Армения» հանդեսում:

Ջերմ ողջույններով, Ձեր՝ Ռ. Աղաբաբյան

23/IX 68 թ. Թբիլիսի.

9. ՌՈՒԲԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ

Հարգելի Ռուբեն Յակովլևիչ

Վերջապես ВАК-ից ստացա բացիկ՝ նախագահության որոշմամբ գիտության թեկնածուի աստիճան տալու վերաբերյալ[13]:

---

[12] Բորիս Պետրովիչ Միխայլով:

[13] ԽՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովը 1968 թ. դեկտեմբերին հաստատում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի որոշումը և Տ. Մարությանին շնորհվում է ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան:

Այս կարևոր էր ոչ այնքան իմ անձնականի, որքան Զվարթնոցի և Թորամանյանի վերակազմության համար[14]: Այս առումով մեր Վարազդատը[15] նույնպես գոհունակությամբ ընդունեց:

Արդ, թույլ տվեք կրկին, ի խորոց սրտի շնորհակալություն հայտնել Ձեր անշահախնդիր, իրական ու բարոյական նշանակալից օժանդակության համար:

Հույս ունեմ 1969 թվականի կեսերին Ձեր ուշադրությանը ներկայացնել «Տայքի ճարտարապետական հուշարձանները»[16] «Հայաստանի» հրատարակչությամբ, իսկ մինչ այդ մեկ-երկու հոդված:

Ձեր նկատմամբ միշտ հարգանքով՝ Տիրան Մարության

3. 12. 1968 թ.

10. ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

ПРОФЕССОР

Р. Я. АГАБАБЯН

ДОКТОР АРХИТЕКТУРЫ

---

[14] Դեռևս 1905 թ. «Մուրճ» ամսագրում ճարտարապետ Թորոս Թորամանյանը հրապարակում է Զվարթնոցի վերակազմության նախագիծը: Տ. Մարությանի «*Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ*» մենագրությունը (1963 թ.) և ատենախոսությունը մեծապես նվիրված էին թորամանյանական վերակազմության պաշտպանությանը և նախագծի պակասող մասերի ամբողջացմանը:

[15] Վարազդատ Հարությունյան:

[16] Տ. Մարությանի «*Տայքի ճարտարապետական հուշարձանները*» գիրքը՝5000 օրինակ տպաքանակով, լույս է տեսնում միայն 1972 թ.: Սակայն Վրաստանի կոմկուսի կենտկոմի գաղափարական գծով քարտուղար Ստուրուայի դրդմամբ և Հայաստանում նույն պաշտոնը զբաղեցնող Ռ. Խաչատրյանի կարգադրությամբ, տպարանից դեռևս դուրս չեկած գրքի ավելի քան 4000 օրինակը ոչնչացվում է: Բանն այն է, որ գրքում ներկայացված Տայքի հայկական հուշարձանները խորհրդային գիտությունը համարում էր վրացական մշակույթի մաս, և գիրքը խորհրդային գրաքննության կողմից ստանում է «նացիոնալիստական» լինելու պիտակը: Այնուամենայնիվ, Տ. Մարությանին 1978 թ. հաջողվում է հրատարակել «*Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք*» վերնագրով նույնաբովանդակ աշխատությունը: Ավելի մանրամասն տե՛ս Հարություն Մարության, «*Տայքի ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը և խորհրդային գրաքննությունը*». – Բանբեր Մատենադարանի N 23, 2017, էջ 112-130:

«7» դեկտեմբերի 1968 թ.

Սիրելի բարեկամ՝ Տիրան!

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ՝ ճարտարապետության թեկնածուի բարձր կոչում ստանալու կապակցությամբ, որին Դուք արժանի եք վաղուց՝ Ձեր բազմամյա և շահավետ գիտական գործունեության շնորհիվ:

Ցանկանում եմ Ձեզ նորանոր հաջողություններ Ձեր ազգանվեր գործունեության բոլոր ասպարեզներում:

Միշտ Ձեր՝

Ռ. Աղաբաբյան

11. ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

Սիրելի Տիրան!

Երկարատև և ծանր հիվանդությունից ու երեք վիրահատությունից հետո վերջապես տանն եմ՝ թարախոտ վերքը վզիս, բայց կամ, ապրում եմ, կապրեմ, ինձ փրկեցին լավ մարդիկ, նրանք դեռ կան այս աշխարհում:

Նոր տարում Ձեզ ամենաջերմ ողջույններ, *քաջառողջություն,* դա է գլխավորը, մնացած կա և կլինի:

Ձերմ ողջույններ

Միշտ Ձեր՝

Ռ. Աղաբաբյան

3. 1. [19]69 Թբիլիսի

12. ՌՈՒԲԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ

Շատ հարգելի Ռուբեն Յակովլևիչ

Ուզում եմ անպայման հավատացած լինել (և այդ ինձ շատ է շոյում), որ իմ մաղթանքները Ձեզ պիտի օգնած լինեն փրկվելու անագորույնի ճիրաններից: Ես երջանիկ եմ գիտենալով, որ առողջ եք: Իրոք, որ գլխավորը առողջ լինելն է, ես այդ գիտեմ, դրա համար էլ Ձեզ ցանկանում եմ նախ և առաջ առողջություն և առողջություն, հազարապատիկ առողջություն:

Ես համբուրում եմ այն ձեռքերը, որոնք Ձեզ փրկել են և որոնց շնորհիվ դուք կաք աշխարհում:

Միշտ Ձեզ հետ՝ Տիրան Մարության

8. 1. 1969 թ.

13. ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

Սիրելի բարեկամ՝ Տիրան!

Խորին շնորհակալությամբ ստացա Ձեր նվերը՝ «Աղստևի հովտի պատմական հուշարձանները»: Ես աշխատում եմ հետ չմնալ կյանքից ու գոնե մամուլի և գրականության միջոցով լինել կապված հայրենի հողի հետ: Աղստևն ինձ, բացի դրանից, շատ մոտ է, չէ որ հայրս՝ Հակոբ Աղաբաբը, Նոյեմբերյան[ի] շրջանի Կողբ գյուղից է ծագումով:

Ի՞նչ նորություններ կան Երևանում: Այստեղ անտանելի ձմեռ է՝ ձյուն, սառնամանիք, բնակարաններում ցուրտ: Գազը չի բավականանում ջեռուցման համար:

Լավ եղեք և երջանիկ:

Միշտ Ձեր՝ Ռուբեն Աղաբաբյան

23. II. [19]69 Թբիլիսի

14. ՌՈՒԲԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ

Սիրելի Ռուբեն Յակովլևիչ

Այսօր Մազմանյանից[17] պատահաբար իմացա, որ նորից լավ չեք զգում Ձեզ ու, թերևս, մեկնելու եք Մոսկվա բուժվելու:

Ցավում եմ, միաժամանակ խնդրում, որ ամենայն լրջությամբ զբաղվեք բուժման գործով, առանց հետաձգելու կամ հարմար ժամանակի սպասելու:

Մեկ ամիս երիկամներով հիվանդ էի, այժմ վերադարձել եմ հիվանդանոցից և ապրիլի 6-ից անցնում եմ աշխատանքի: Սպասում եմ այն նամակին, որտեղ գրած կլինեք. «առողջացել եմ և անցնում եմ աշխատանքի», ողջ եղեք:[18]

Լավագույն ցանկություններով՝ Տ. Մ.

4. 4. [19]70 թ.

---

[17] Միքայել Մազմանյան (1899-1971) – ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ, արվեստի վաստակավոր գործիչ, Տիրան Մարությանի «*Տայքի ճարտարապետական հուշարձանները*» (1972 թ.) գրքի խմբագիր:

[18] Տիրան Մարությանին հասակակից (1911 թ.) Ռուբեն Աղաբաբյանը վախճանվում է 1970 թ. դեկտեմբերի 6-ին՝ Թբիլիսիում:



Հարգելի Տիրան!

Քո ուղարկած գրությունը, խնդրանքը (թեկնածությունիս դասախոսությունը), ստացանք։

1. ԲԱՀ-ին դիմելու հարցը էլ, այդ գործն արդեն վերցրել էինք մեր վրա։ Մենք, գիտնականները մի քանի անգամ, ինչպես նաև ինքս Ռեկտորին մի քանի անգամ խնդրեցինք և կոչ արեցինք Քո գործը վերանայելու։ Հիմա ինչպես գիտեք, ոչ միայն Ռեկտորատից, այլև Բարձր Հաստատությունից։ Մի քիչ էլ սպասենք, եթե անհրաժեշտ չեղավ, նորից դիմում կգրենք Կ. Պ. Ս-ին և կխնդրենք։

2. Քո հոդվածը «Գիտություն և տեխնիկայի» կարգում, լավ պատրաստված հոդված է։ Ես այն, մեր թարգմանությունը և դրա մասին երբեք, պատրաստվում է տպագրության։ Կհաղորդեմ։ Հենց թեմայով «Ալբերտաս Արուքյաս» հոդվածում։

Ողջագուրում, Քո Ռ. Աղաբաբյան

23/XI 68 թվականի

Նկ. 1 – Ռ. Աղաբաբյանի Տ. Մարությանին ուղարկած նամակներից (N 8)



Սարգսի Ռ. Յ.

~~30.11.1968-ին~~ Հեղափոխ. ՎԱԿ-ից ստացա Ձեր գրությունը, Ամենայն զգուշությամբ գրագիտորեն գրված թղթատարը ստացվեցավ չեղյալ համարվեց:

Այդ ~~ոչ~~ ոչ մի ~~ոչ~~ հանցանք չունի իր ազգությունից, որքան Ձեզ ստիպողական և թշնամանքի վերաբերմունք հարկավոր: Այդ առարկում ոչ հայրենասիրական զգացմունքներ չեն սնվում:

Այդ, թող լավագույն կողմը, իր բոլոր արդյունքներով, դեպքերը հետաքրքրվելով, կարելի Ձեզ բերած ոչ հանգամանքային օժանդակություն հարկավոր:

Բայց ես 1969 թվի հունվարի Ձեզ տալիս եմ «Մարդիկ Հայաստանյան հրաշքներում» ~~հեղափոխության~~ «հայտնաբերման» հրատարակությունը, որի մասին այդ ՎԿ-ն հարցնում:

Ձեզ ամենայն դիրք հարգանքով:

3.12.1968

Տիգրան Սարգսյան

Նկ. 2 – Տ. Մարությանի Ռ. Աղաբաբյանին ուղղված նամակի սևագիրը (N 9)